ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/209

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ա. Շահդարյանի (լիազորագիր տրված՝ 25.12.2018թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.12.2018թ. թիվ 27/26-3/23347-18 գրությամբ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 11.12.2018թ. թիվ ԴՎԱ/4951 գրության հիման վրա, 17.12.2018թ. թիվ 27/26-3/23347-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.12.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից 02.11.2018թ. հայտարարվել է ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների՝ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին: Ընկերությունը պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 15.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն մի քանի չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 28.10.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետը ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 07.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետուն չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Վերոնշյալի կապակցությամբ Ընկերությունը հայտնել, որ Հանձնաժողովի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ին առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն չի նշվել ինչ եղանակով է պետք կատարել շտկումը՝ էլեկտրոնային թե այլ տարբերակով /տես թիվ 3 արձան. վերջին պարբերություն/:

<<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն վերը նշված արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, որը թերևս չիմացության, ինչպես նաև Հանձնաժողովի արձանագրության մեջ հստակ ծանուցման ձև չսահմանելու պատճառով 06.12.2018թ. ժամը 09:46-ին ուղարկվել է a.maghaqyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին, որը հանդիսանում է Պատվիրատուի գնումների վարչության պաշտոնական էլ. փոստի հասցե:

Որպես վորոնշյալի ապացույց, <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն կցել է a.maghaqyan@mil.am էլ. փոստի հասցեին ուղարկված նամակի կարճապատկերումը (screenshot) և հայտնել է, որ կարող է նաև անհրաժեշտության դեպքում ՍՑ-ԱՄ-2018/209 ծածկագրով պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության նիստի ժամանակ համակարգչի միջոցով ցույց տալ համապատասխան նամակը, և համոզվել նրանում, որ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի կողմից ուղարկված նամակը վերաբերում է Պատվիրատուի կողմից հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1>> ծածկագրով գնման ընթացակարգին և կցված են այդ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, այլ ոչ՝ այլ գնման ընթացակարգերի: Այս դեպքում թերևս անտրամաբանական է ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից և այնուհետև չներկայացնել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը վկայակոչել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը,

6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով,

34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,

34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),

34-րդ հոդվածի 6-րդ մասին համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

<<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն թյուրիմացության մեջ է ընկել այն փաստից, որ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու նպատակով Ընկերությանը առաջարկվել է էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ներկայացնել վերը նշված փաստաթղթերը: Սակայն արդեն ներկայացված փաստաթղթերում Հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հղում է կատարվել Կարգի 47-րդ կետին, իսկ թե նշված կետով, թե արձանագրության մեջ՝ նշված չէ ինչ եղանակով է պետք ներկայցնել շտկված փաստաթղթերը: Այդ պատճառով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգերը նորամուծություն է և դեռևս Ընկերության կողմից այն ամբողջությամբ չի ըմբռնվել, <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն համապատասխան փաստաթղթերը ուղարկել է տվյալ գնման ընթացակարգի գնումների համակարգողի պաշտոնական էլ.փոստի հասցեին:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից Ընկերությունը գտնում է, որ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված փաստաթղթերը ուղարկվել են Պատվիրատուին/ տվյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլ. փոստի հասցեին/:

Այս պարագայում <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի վարքագիծը և կատարած գործողությունները վկայում են այն մասին, որ Ընկերությունը չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից և նպատակ չի հետապնդել խուսափելու գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի պայմաններում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ընկերությունը նշել է, որ նմանատիպ փաստական հանգամանքների վերաբերյալ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացվել է ՍՑ-ԷՍ-2018/51, ՍՑ-ԱՄ-2018/134 և այլ ծածկագրերով որոշումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ այս ընթացակարգի շրջանակներում կայացվելիք որոշման համար»:

Ամփոփելով վերոգրյալը, <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ

ներկայացված <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/209 ընթացակարգի շրջանակներում 19.12.2018թ. ժամը 11:40-ին և 25.12.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.12.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2018թ. թիվ ԴՎԱ/4951 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կարիքների համար բժշկական պարագաների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգին Eauction համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել թվով 6 մասնակիցներ, այդ թվում՝ «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն:

«Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 8-րդ, 28-րդ, 39-րդ, 45-րդ, 47-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից: Eauction համակարգի միջոցով ծանուցվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանդի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման ժամանակ հանձնաժողովը պարզել է, որ «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 05.12.208թ. կայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

«Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով արձանագրված անհամապատասխանությունները չշտկվեցին՝ որևէ փաստաթուղթ չներկայացվեց /մանրամասն տեղեկույթունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրույթուններում/:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի հայտը մերժել, միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 19.12.2018թ. ժամը 11:40-ին և 25.12.2018թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/209 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊՆ ՆՏԱԴԲԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն /Հավելված 1/՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ, 28-րդ, 39-րդ, 45-րդ, 47-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին

սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ <<Մարիյա Մեդ Քo>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և արձանագրվել է բոլոր այն անհամապատասխանությունները, որոնք պետք է շտկվեն Ընկերության կողմից:

4. Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և 05.12.2018թ. ծանուցմամբ առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկվեցին:

6. «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «mariyamedco@gmail.com» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. փոստի հասցեից 06.12.2018թ. ժամը 09:46-ին Eauction համակարգով ուղարկելու փոխարեն շտկված փաստաթղթերը ուղարկվել են Ընթացակարգի քարտուղարի a.maghaqyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.12.2018թ. թիվ 27/26-3/23347-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.12.2018թ. թիվ ԴՎԱ/4951 գրությունը և կից փաստաթղթերը, «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ի 26.12.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը

համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն /Հավելված 1/՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ, 28-րդ, 39-րդ, 45-րդ, 47-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ և 59-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնաժողովի 28.11.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և արձանագրվել է բոլոր այն անհամապատասխանությունները, որոնք պետք է շտկվեն Ընկերության կողմից:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և 05.12.2018թ. ծանուցմամբ առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ

Ընկերության կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկվեցին:

«Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՍՑ-ԱՄ-2018/209 ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «mariyamedco@gmail.com» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. հասցեից 06.12.2018թ. ժամը 09:46-ին շտկված փաստաթղթերը ուղարկվել են Ընթացակարգի քարտուղարի a.maghaqyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «mariyamedco@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև նշված էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնի համապատասխան էլեկտրոնային նամակն, արձանագրում եմ, որ Ընկերությունը Eauction համակարգի միջոցով համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (05.12.2018թ.) սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ 06.12.2018թ. Eauction համակարգի փոխարեն շտկված փաստաթղթերն ուղարկել է Ընթացակարգի քարտուղարի «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեին:

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 7.9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ եթե արձանագրվում են անհամապատասխանություններ սույն հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***համակարգի միջոցով*** նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սույն ենթակետով սահմանված ժամկետում մասնակիցը ***համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը***, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ուսումնասիրելով «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքն, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից շտկված փաստաթղթերն ուղարկվել են ոչ թե Eauction համակարգի միջոցով, ինչպես պահանջվում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԷԱՃԱՊՁԲ-9/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով, այլ Ընթացակարգի քարտուղարի «a.maghaqyan@mil.am» էլեկտրոնային փոստի հասցեին, այնուամենայնիվ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ Ընկերությունը համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված մեկ օրյա ժամկետում փաստացի կատարել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու և ուղարկելու պարտականությունը, միևնույն ժամանակ թյուրիմացաբար ուղարկելով Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.12.2018թ. թիվ 27/26-3/23347-18 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01564583) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ